ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ՀՀ Ազգային ժողովի 2012 թ. ընտրությունների դիտարկման նախնական արդյունքները

Երևան «Հայելի» ակումբ

8 մայիսի, 2012 թ.

Մամլո հաղորդագրություն

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը կարևորում է ազատ, արդար և թափանցիկ ընտրությունների դերը՝ որպես ժողովրդավարության կարևորագույն նախապայմաններից մեկը, որի նպատակով էլ իրականացնում է ընտրությունների երկարաժամկետ և կարճաժամկետ մշտադիտարկումներ ՀՀ տարածքում:

Կազմակերպության կողմից իրականացված դիտորդական առաքելության երկարամյա փորձը հավաստում է, որ ընտրական իրավունքի խախտումները համակարգային են, և նրանց կանխարգելման իրավական մեխանիզմներն անարդյունավետ են: Այդ համատեքստում կարծում ենք, որ դիտորդական առաքելությունը պոտենցիալ կանխարգելիչ միջոց է, որը կարող է և ազդում է ընտրական գործընթացի վրա:

2012 թ. խորհրդարանական ընտրությունների դիտարկումներն իրականացվել են «2012 թ. խորհրդարանական ընտրությունների նկատմամբ քաղաքացիական վերահսկողության կարողությունների զարգացում» ծրագրի շրջանակներում, որը ժողովրդավարական գործընթացների նկատմամբ քաղաքացիական վերահսկողություն ապահովելու ևս մեկ քայլ է՝ ուղղված ազատ, արդար և թափանցիկ ընտրությունների անցկացմանը:

Ծրագրի շրջանակներում ՀՔԱ Վանաձորի գրասենյակի 94 դիտորդներ կարճաժամկետ դիտորդություն են իրականացրել 2012 թ. մայիսի 6-ին կայանալիք ԱԺ ընտրությունների ժամանակ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա թիվ 7 ընտրատարածքում, Վանաձոր, Իջևան և Գյումրի քաղաքներում: Բացի այդ, ՀՔԱ Վանաձորի գրասենյակի մանդատով «Գորիսի կանանց ռեսուրս կենտրոն» ՀԿ-ի կողմից դիտորդական առաքելություն են իրականացրել ևս 104 դիտորդներ:

Կարճաժամկետ դիտորդությունն իրականացվել է ԱԺ ընտրությունների քվեարկության օրը, որի ընթացքում դիտարկվել են՝

- տեղամասային ընտրական հանձնաժողովի աշխատանքի կազմակերպումը տեղամասը բացելուց առաջ
- քվեարկության ընթացքը
- քվեարկության արդյունքների հաշվարկը և ամփոփումը:

59 Tigran Mets st., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

Քվեարկության ընթացքի և քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմակերպության դիտորդների կողմից արձանագրված խախտումները:

2012 թ. մայիսի 6-ին Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը ԱԺ ընտրությունների ժամանակ դիտորդություն իրականացնելու ընթացքում արձանագրել է մի շարք խախտումներ, մասնավորապես՝

Դրոշմակնիքի հետ կապված խնդիրներ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիտորդները արձանագրել են, որ Վանաձոր քաղաքի թիվ 30/07, 30/22, 31/05, 30/37, 29/3 ընտրատեղամասերում և Գյումրիի թիվ 33/77 ընտրատեղամասում, անձը հաստատող փաստաթղթի մեջ դրված դրոշմակնիքը մոտ 15 րոպե հետո ցնդել է: Այնինչ ՀՀ ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անձը հաստատող փաստաթղթի դրոշմակնքման համար տեղամասային ընտրական հանձնաժողովներին հատկացվում է այնպիսի նյութ, որն օգտագործելուց հետո առնվազն 12 ժամ պահպանվում է, իսկ հետո՝ անհետանում:

Ընտրակաշառքների զանգվածային կիրառում

2012 թ. ԱԺ ընտրությունների նախորդ օրը՝ մայիսի 5-ին, և քվեարկության օրը՝ մայիսի 6-ին, ՀՔԱ Վանաձորի գրասենյակը քաղաքացիների կողմից բազմաթիվ ահազանգեր է ստացել ընտրակաշառքների բաժանման վերաբերյալ: Կազմակերպության աշխատակիցները արագ արձագանքել են քաղաքացիների զանգերին: Այն պահին, երբ աշխատակիցները ժամանել են դեպքի վայր կազմակերպիչները և հավաքված անձինք հեռացել են տարածքից:

Տվյալ գործընթացները կանխելու ուղղությամբ ՀՀ ոստիկանության կողմից որևէ միջոցառում չի ձեռնարկվել:

Անհայտ քաղաքացուց ահազանգ է ստացվել, որ 30/32 ընտրատեղամասի մոտակայքում՝ ՀՀԿ-ի շտաբում, ընտրակաշառք են բաժանում: Կազմակերպության դիտորդները ժամը 19:30-ն ընկած ժամանակահատվածում մեկնել են նշված վայր: Շտաբի դռները փակ են եղել, սակայն բակում սպասող կինն ու տղամարդը նշել են, որ շտաբի աշխատակիցները գնացել են գումար բերելու և իրենք էլ դրան են սպասում: Դիտորդներին նույնպես հորդորել են սպասել: Շտաբի մոտ կանգնած տղամարդը նշել է, որ կարող են դիտորդները գնալ տեղամաս և տեղամասում գտնվող ոմն Վազգենը հնարավոր է, որ գումարը այնտեղ վճարի:

59 Tigran Mets st., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

Տեղամասային ընտրական հանձնաժողովի մասնագիտական ոչ պատշաճ պատրաստվածություն

- Օրենքների չիմացություն
- Վատ վարչարարություն

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի 7/02 ընտրատեղամասում հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի նիստին չի թույլատրել մասնակցել ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիտորդին: Պատճառաբանելով, որ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից տրված ՀՀ ազգային ժողովի ընտրությունների տեղական դիտորդի վկայականի 1-ին կետում նշված է, որ դիտորդն իրավունք չունի ներկա լինելու ընտրական հանձնաժողովի նիստերին: Կազմակերպության կողմից անմիջապես գրություն է ուղարկվել ՀՀ Կենտրանական ընտրական հանձնաժողովին, որից հետո դիտորդին թույլատրվել է ներկա գտնվել քվեարկության սենյակում և մասնակցել նիստին:

Թիվ 7/08 ընտրատեղամասում մեծամասնական քվեաթերթիկների մեկ փաթեթ կնիքված չի եղել:

Թիվ 7/20 ընտրատեղամասում հանձնաժողովի նախագահը հայտնել է, որ դիտորդը իրավունք չունի մասնակցել քվեարկության արդյունքների ամփոփման նիստին, սակայն դիտորդի կողմից օրենքի համապատասխան կետը նշելուց հետո միայն թույլատրվել է նրա մասնակցությունը քվեարկության արդյունքների ամփոփմանը:

Թիվ 7/6 ընտրատեղամասում ինքնուրույն քվեարկել չկարողացող կնոջն օգնել է մի քաղաքացի, որը առանց անձնագրի է եղել, տվյալները չեն գրանցվել, դիտորդը զգուշացրել է հանձնաժողովի նախագահին, սակայն փաստը չի արձանագրվել:

Հանձնաժողովների անդամները անկախ կուսակցական բաշխվածությանը միատեսակ վարքագիծ էին ցուցաբերում և որպես կանոն ներկայացնում էին Հանրապետական կուսակցության շահերը:

Թիվ 7/35 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների կողմից քվեարկության ընթացքում պարբերաբար ուսումնասիրվել են ընտրողների ցուցակները և չքվեարկված անձանց վերաբերյալ ինֆորմացիա է տրամադրվել հեռախոսով՝ «բերման ենթարկելու» նպատակով, որից հետո նկատվել է ընտրողների ուղղորդված հոսք: Նման դեպքեր են նկատվել նաև այլ տեղամասերում:

Քվեարկության գաղտնիության խախտում

Արձանագրվել են քվեարկության գաղտնիության խախտման դեպքեր՝

59 Tigran Mets st., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

- Վանաձոր քաղաքի թիվ 30/36 ընտրատեղամասի քվեախցիկը տեղադրված է եղել այնպես, որ չի ապահովում ընտրողի օրենքով սահմանված գաղտնի ընտրության իրավունքը:

- Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի 7/30 ընտրատեղամասը տեղակայված է եղել առաջին հարկում, իսկ քվեախցիկները տեղադրված են եղել պատուհանների դիմաց, որը խախտել է քվեարկության գաղտնիությունը:

Կազմակերպության դիտորդի միջամտությունից հետո խախտումը վերացվել է մինչև քվեարկության սկսվելը:

- Թիվ 7/27 ընտրատեղամասում ընտրողը լուսանկարել է քվեաթերթիկը:

Ընտրողների ազատ կամքի արտահայտման նկատմամբ խոչընդոտներ

Նախընտրական ամբողջ քարոզչության ընթացքում ընտրախախտումների չկանխարգելման և անպատժելիության մթնոլորտի ձևավորումը բացասական ազդեցություն ունեցավ նաև քվեարկության օրը:

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի 7/6 ընտրատեղամասում, ըստ դիտորդի՝ պատգամավորության թեկնածու Վարդան Վարդանյանի վստահված անձը՝ Արմեն Իսրայելյանը, ընտրողներին ուղղորդել է: Ընտրելուց հետո մարդիկ ընտրելու վերաբերյալ գլխով նշան են տվել վստահված անձին:

«Կարուսել»

Տարբեր ընտրատեղամասերում քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ քվեատուփից հանվել են դատարկ ծրարներ, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ դուրս բերված քվեաթերթիկները նախօրոք քվեարկած վիճակում տրամադրվել են ընտրողներին, ինչն էլ վերահսկելի է դարձրել ընտրողների քվեարկությունը: (30/07, 29/11, 29/3, 7/35 և այլ ընտրատեղամասերում):

Կրկնակի քվեարկության դեպքեր

Թիվ 7/10 ընտրատեղամասում ընտրողը երկրորդ անգամ է ցանկացել քվեարկել, սակայն հանձնաժողովը ճանաչելով նրան չի թույլատրել: Ընտրողը չի համաձայնվել, նշելով, որ ընտրության դեռ չի մասնակցել: Կազմակերպության դիտորդը դիմել է նախագահին արձանագրություն կազմելու համար: Նախագահը պատասխանել է, որ ընտրողները քույրեր են եղել և շփոթել են անձնագրերը:

Հարկ է նշել, որ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից դիտարկված տեղամասերում հիմնականում ֆիզիկական բռնություններ հանձնաժողովի

59 Tigran Mets st., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

անդամների, դիտորդների, վստահված անձանց նկատմամբ չեն կիրառվել:

Լոռու մարզի Վահագնի գյուղում տեղակայված թիվ 30/18 ընտրատեղամասում գյուղապետը, որը հանդիսացել է ՀՅԴ-ի վստահված անձ, խոչնդոտել է ընտրական գործընթացին: Մասնավորապես, դիտորդի ներկայությամբ վերջինս վիճաբանել է հանձնաժողովի նախագահի, այնուհետև հանձնաժողովի անդամներից մեկի հետ: Միջադեպի վերաբերյալ կազմակերպության դիտորդի միջամտությամբ կազմվել է համապատասխան արձանագրություն:

Այսպիսով, նախընտրական քարոզարշավի ընթացքում և բուն քվեարկության օրը ընտրական տեղամասերում ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից իրականացված դիտորդության տվյալների հիման վրա կարելի է արձանագրել, որ վարչական ռեսուրսների օգտագործման հետևանքով տեղի է ունեցել ընտրողների ազատ կամքի արտահայտման համակարգված խախտում, որը դրսևորվել է ամբողջ նախընտրական քարոզչության և ընտրությունների օրվա ընթացքում և էական ազդեցություն է ունեցել ընտրությունների վերջնական արդյունքների վրա:

Որոշ դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպություններ չեն նպաստել ընտրախախտումների կանխարգելմանը:

Ամբողջական զեկույցը կներկայացվի մայիսի 12-ին:

59 Tigran Mets st., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am